ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/119» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գահատման նիստի

ք. Արթիկ 03.11.2026թ. ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Համլետ Սուջյան՝ /քարտուղարության անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ/ հանձնաժողովի ղեկավար

Հանձնաժողովի անդամներ՝

2) Գոհար Մկրտչյան՝ /քարտուղարության անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ /, հանձնաժողովի անդամ

3)Աննա Աղաբաբյան՝ /քարտուղարության անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ/ հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովի քարտուղար՝

գնումների գլխավոր մասնագետ Ղ. Գրիգորյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Համլետ Սուջյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակցի մասին:
3. Հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Մասնակցի առաջարկած գնի մասին:
5. Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի հայտի ներկայացրած մասնակցի մասին:

(զեկուցող՝ Համլետ Սուջյան)

2.1 ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/119 **ծածկագրով ընթացակարգի հայտերը eauction.armeps.am համակարգի միջոցով հակադարձ աճուրդը ավարտվել է 2026թ.-ի նոյեմբերի 3-ին ժամը 12:30-ին.**

2.2Ընդունել ի գիտություն, որ

էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով սահմանված պահանջներին համապատասխան ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Հասցե	Էլ. Փոստի հասցե
1	ԱԴԱ-ԳՐԻԳ ՍՊԸ	ՇԻՐԱԿ ԱՆՈՒՇԱՎԱՆ 1 Փ. 43 +374-41-99-11-00 տնօրեն՝ Արտյոմ Չարչյան	robert87@list.ru

3. «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/119***» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին***

(զեկուցող՝ Համլետ Սուջյան)

3.1 «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/119» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ փաստաթղթերը.

- Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն համաձայն հավելված N1-ի
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը հավելված N 1.2-ի, ըստ անհրաժեշտության

3.2 ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման հրավերին մասնակցող մասնակցի՝ «ԱԴԱ-ԳՐԻԳ» ՍՊԸ -ի կողմից____www. eauction.armeps.am համակարգով ներկայացված հայտում չկան անհամապատասխանություններ հրավերի պահանջի նկատմամբ:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

(զեկուցող՝ Համլետ Սուջյան)

4.1 Գնահատող հանձնաժողովի քարտողարը գրավոր հարցումներ չի ստացել հրավերի բովանդակության վերաբերյալ մինչ հրավերի բացման նիստը :

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. ***Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ :***

(զեկուցող՝ Համլետ Սուջյան)

5.1 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի դրույթներով հանձնաժողովի նախագահը հրապարակեց, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկը

5.2Ընդունել ի գիտություն, որ.

Չափաբաժին 1.

Հ/Հ	Ծառայության անվանումը	Նախահաշվային գին	Մասնակիցներ	Մասնակիցների հայտերով ներկայացված վերջնական արժեքները /ՀՀ դրամ/		
				Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերումը	2 994 500	ԱԴԱ-ԳՐԻԳ ՍՊԸ	2494475	20 %	2993370

6. ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/119 ***ծածկագրով գնման ընթացակարգի ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման ընթացակարգի բացման նիստի արդյունքների ամփոփման մասին***

զեկուցող՝ հանձն նախագահ (Համլետ Սուջյան)

7.1 *Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին օրենքի» 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գնային առաջարկ ներկայացրած և ընտրված մասնակից է համարվում* ԱԴԱ-ԳՐԻԳ ՍՊԸ-ն

Չափաբաժիններ 1՝ ***ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման***

Հաստատել ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/119 *ծածկագրով ԷԱՃ ընթացակարգով պայմանագրի կնքման որոշման մասին հայտարարության տեքստը*

6.2. *Սյուն ընթացակարգի համար ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի* համաձայն նախատեսված անգործության ժամկետը՝ կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր.:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է՝ կնքվող պայմանագրի որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից հետո՝ 4-րդ աշխատանքային օրը, պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցին ծանուցել պայմանագրի նախագիծը՝ ԱԴԱ-ԳՐԻԳ ՍՊԸ-ին*:*

ՀՀ «Գնումների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է՝ պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը նախատեսված ծառայությունների գնման գնի 10(տաս) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ «տուժանքի ձևով» նախատեսված ծառայությունների գնման գնի 15(տասնհինգ) տոկոսի չափով

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Համլետ Սուջյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գոհար Մկրտչյան

_____ Աննա Աղաբաբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ղ. Գրիգորյան